ՔԱՐՈԶԽՈՍԱՔԿԱՆ

Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱԲԵՂԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԵՐԵՒԱՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ՝ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԱՆԴՐԱՆԻԿ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(30 օգոստոսի, կիրակի, 2009թ.)

Սիրելի բարեպաշտ քույրեր եւ եղբայրներ՝ շուրջ քառասուն օրեր առաջ ես եւ եւս 26 սարկավագներ կամոքն Աստուծո եւ օրհնությամբ ազգիս Հայրապետի ձեռնադրության սուրբ արարողությամբ ստացանք քահանայության աստիճան՝ մեր սպասավորությունը բերելու Հայաստանյայց մեր Սուրբ Եկեղեցու անդաստանից ներս գործող թեմերում եւ զանազան կառույցներում:

Այս առթիվ իմ որդիական երախտագիտությունն եմ ցանկանում հայտնել Ն. Ս. Օ. Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին՝ իր հայրական հոգածության եւ խնամքի համար, երախտագիտությունս եմ հայտնում իմ հոգեւոր ծնող՝ Հյուսիսային Ամերիկայի Արեւելյան թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանին, ստանձնելու համար իմ եւ օծակից եղբայրներիս ձեռնադրության ազնիվ պաշտոնը, շնորհակալությունս եմ հայտնում Արարատյան Հայրապետական թեմի բարեխնամ առաջնորդական փոխանորդ՝ Տ. Նավասարդ արք. Կճոյանին, եւ ի մասնավորի Կաթողիկե Սբ. Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ՝ Տ. Ավետիս քհն. Դանիելյանին՝ այս եկեղեցու սուրբ Խորանին իմ անդրանիկ պատարագը մատուցելու պատվին ինձ արժանացնելու համար:

Ընդէ՞ր այդպէս վատասիրտք էք,
չե՞ւ եւս ունիք հաւատս: (Մարկ. Դ 40)

Ինչո՞ւ եք այդպես վախենում, մի՞թե դեռեւս հավատք չունեք:

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ,

Այսօր մակերեսայնացված մեքենայացված կյանքի եւ համատարած անտարբերության պայմաններում մենք գնալով կորցնում ենք մեր վստահությունը մյուսների եւ, ինչու չէ, երբեմն նաեւ ինքներս մեր հանդեպ: Ընկղմվելով առօրյա մեր հոգսերի մեջ՝ մոռանում ենք երկնային շնորհը՝ մեր Տիրոջ խոստումը, թե ահավասիկ ես Ձեզ հետ եմ մինչեւ աշխարհի վախճանը:

Սիրելիներ, մենք կարիք ունենք հավատքի վերակենդանության եւ հույսի ամրապնդման:

Օրվա ավետարանական դրվագը ներկայացնում է մեզ, թե ինչպես մեր Տեր Հիսուս Քրիստոս Իր աշակերտների հետ նավակով անցնում էր ծովի մի ափից մյուսը, եւ հանկարծ

սաստիկ փոթորիկ բարձրացավ: Ուժգին ալիքների պատճառովջուրը լցվում էր նավակի մեջ: Առաքյալները, խուճապահար մոտենալով նավակի անկյունում հանգիստ ննջող Հիսուսին, ասացին, որ ահա պիտի խորտակվեն: Քրիստոս դառնալով ծովի ալիքներին, հրամայեց, որ հանդարտվեն, եւ ծովը խաղաղվեց: Այնուհետեւ Հիսուս Իր աշակերտներին ասաց. «Ինչո՞ւ եք այդպես վախենում, մի՞թե դեռեւս հավատք չունեք»:

Այս պատմությունը, կարելի է ասել, ինքնին հիմքն է մեր եւ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հարաբերությունների: Եթե ուշադիր լինենք, ալեկոծված ծովը մեր բազմահույզ եւ դժվար կյանքն է՝ լի զանազան անսպասելի անախորժություններով ու դժվարություններով, նավակը՝ մեր գործերը եւ մեր վարքը, իսկ նավակում ննջող Քրիստոս՝ հենց ինքը Քրիստոսն է, որ միշտ ներկա է մեր կյանքից ներս: Առաքյալների պես մենք եւս դժվարության պահին, անգամ եթե կանոնավոր եկեղեցի ենք հաճախում, Սուրբ Գիրք ենք ընթերցում, միեւնույն է հուսահատվում ենք եւ մեզ թվում է, թե այլեւս ոչինչ չի օգնի: Այն արտահայտությունը, թե Աստծո համար անկարելի ոչինչ չկա, մնում է լոկ մեր շուրթերին եւ ոչ մեր գիտակցության մեջ: Սիրելիներ, Տերը մեզանից մի բան է ուզում՝ անմնացորդ հավատ: Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքի շնորհիվ էր, որ կույրի աչքերը բացվեցին, Հիսուսին մոտեցած մարդու նույն հավատքի զորությամբ իր հիվանդ որդին բժշկվեց, ժողովրդապետի դուստրը Քրիստոսի հանդեպ ունեցած նույն հավատքով հարություն առավ, նույն հավատքով բժշկվեց տեռատես կինը, Քրիստոսի բարեկամ Մարթայի հավատքի շնորհիվ էր, որ Մեր Տերը հարություն տվեց նրա եղբորը՝ չորս օր մեռած Ղազարոսին:

Եւ վերջապես, Պետրոսն իր հավատքի համար վեմ անվանվեց եւ նույն հավատքի շնորհիվ կարողացավ քայլել ծովի վրայով, սակայն երբ երկմտեց, սկսեց ընկղմվել ջրերի մեջ:

Հին դարերում հայտնի մի ճարտասանական դպրոց կար, որի ուսուցչապետները հռչակ էին վայելում ողջ աշխարհում իրենց իմաստնության եւ ճարտար լեզվի շնորհիվ: Դպրոցի սաներից մեկը մի օր քայլելով ծովի եզերքով մտածում է, թե արդյոք կա՞ մի բան աշխարհում, որ իր ուսուցիչը չիմանա: Այսպես խորհելով ճեմում է եւ հանկարծ մի թիթեռ է տեսնում թփի վրա նստած: Բռնում է թիթեռին եւ ափի մեջ փակած գալիս է ուսուցչի մոտ: Թիթեռը խուտուտ է տալիս տղայի ափը, ուստի նա ակամա ժպտալով հարցնում է ուսուցչին, թե արդյոք իր ափի միջի թիթեռը կենդանի է թե սատկած: Ուսուցիչը պատասխանում է. «Հարցիդ պատասխանը քո ձեռքերում է»:

Նույնպես եւ մենք սիրելիներ, Տիրոջ այն հարցի պատասխանը, թե ինչու ենք վախենում մի՞թե դեռեւս հավատք չունենք, մեր ձեռքերում է, ամեն վայրկյան կարող ենք ափը սեղմել եւ ոչնչացնել մեր հավատն ու վստահությունը եւ կամ այն լայնորեն բացել եւ համարձակորեն խոստովանել մեր հավատն առ Երկնավոր մեր Հայրը:

Դանիացի իմաստասեր Կերկեգորն ասել է. «Մարդիկ շրջում են աշխարհով մեկ, որպեսզի տեսնեն գետեր, լեռներ, եզակի թռչուններ եւ ձկներ, վայրի ցեղեր, եւ երեւակայում են, թե արտառոց մի բան են տեսել: Ինձ համար դա չէ կարեւորը, այլ եթե իմանայի, թե որտեղ կարող եմ գտնել «հավատի ասպետին», ես ոտնաբոբիկ անգամ մինչեւ աշխարհի ծայրը կգնայի նրա ետեւից»: Իմաստասերն այս խոսքով ցույց է տալիս, որ հավատից զուրկ մարդը դատապարտված է սիզիփոսյան տանջանքների՝ լրացնելու համար իր ներքին դատարկությունը:

«Ի՞նչ է հավատը, եթե ոչ հուսացած բաների հաստատումը եւ ապացույցն այն բաների, որոնք չեն երեւում»,- ասում է Պողոս առաքյալը:

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կյանքի բանալին եւս հավատն ու սերն էին առ Երկնավոր Հայրը, որը դարձավ շնորհ եւ փրկություն մարդկության համար:

Եկեք ուրեմն միասնաբար աղոթենք, որպեսզի մեր սրտերի մեջ եւս գեթ մեկ նշույլ կաթի այն հավատի եւ սիրո ճառագայթներից, որոնք լուսավորեցին մեր Տիրոջ ուղին:

Շնորհ, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Քեզ եւ ընդ ամենեսեանս. Ամէն: